

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԵՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՕՆԱՆԱԿԱՆՔԻՆ

Մենք Բրիտանիոյ Վեհ. Թագաւոր՝ ձորճն. ի ծընուողը տօնական հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Պաղեստինի ամէն կողմը. Բոլոր պաշտօնական եւ հանրային հաստատութիւնները դրօշազարդուած էին: Հայոց Պատրիարքարանին վրայ կը ծածանէր անգղիական խաչանիշ եռագոյնը:

Այս առթիւ երուսաղէմի մէջ պաշտօնական երկու հանդէսներ տեղի ունեցան. նախ Յունիս 2 Գիր. տօնուն ժամը 10ին, Անկիւրքան Սէնթ-ձորճն եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հանդիսաւոր պաշտամունք մը, նախագահութեամբ Մէկ Ինէս եպօս. որուն ներկայ էին Պաղեստինի եւ Անգլո-Յորդանանի Բարձր Բօմիսէր Ն. Վ. Լորտ Փլումբը, իր շրախումբով եւ երուսաղէմի կառավարութեան պաշտօնէութիւնը, ինչպէս նաեւ Հոգեւոր Պետեր, եւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն, Պարթև. Փոխ. Գեր. Մկրտիչ Սրբազան. Հոգ. Կիրիլ Վրդ. Խորաշինանի հետ:

Եկեղեցական պաշտամունքին հարկ բնորոշութիւն մը կատարուեցաւ Սէնթ-ձորճն եպիսկոպոսարանին մէջ, ուր հոգեւոր պետեր եւ Պաղեստինի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնատէրներ իրենց երախտագիտական յարգանքներն ու բարեմաղթութիւնները մատուցին Ն. Վ. Բարձր Բօմիսէրին եւ մեծարուեցան:

Յաջորդ օրը, Յունիս 4, ԲՇ. երուսաղէմի կառավարչատան մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բնորոշութիւն մը եւ այս առթիւ Քէլանդան մը արքունեցաւ, որուն ճրարիտեցան նաեւ Ս. Քաղարիս Հոգեւոր Պետերը, եւ զարմեալ Պարթև. Փոխանորդ Գեր. Մկրտիչ Եպս. Հոգ. Կիրիլ Վրդ. ի հետ ներկայ գտնուեցաւ այս ընդունելութեան՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն:

Ն. Վ. Բարձր Բօմիսէր հետաքրքրուած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր որպիսութեամբ, մասնաւոր տեսակցութիւն մը ունենալով Փոխանորդ Սրբազանի հետ:

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԸՄԲՇԱՆԱԿ

(The Eighth Annual Athletic Sports Meeting for pupils of Government Schools)

Պաղեստինի կառավարական Դպրոցներու տաքիկան Ըմբշխաղին ութերորդ տեղի ունեցաւ Մայիս 24, ե. շ., մեր Համարածման տօնին օրը, կէսօրէն հորը ժամը 2ին Արարական Գոլէճի դաշտին վրայ, Ն. Վ. Պաղեստինի եւ Անգլո-Յորդանանի Բարձր Բօմիսէր Լորտ Փլումբին հովանաւորութեամբ, Կրթական Գործոց Տեսչութեան կողմէն ճրարէր ուղղուած էր նաեւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ ներկայ գտնուի այս խաղերուն: Ն. Բ. Սրբազանութեան կողմէն Գեր. Եղիշէ Եպս. Չիլիկիւրեան ներկայ գտնուեցաւ՝ Թարգման Հոգ. Տրդատ Վրդպետի հետ:

Այս խաղերուն մեր ժառանգաւորներն այլ կը մասնակցին երբ տարիէ ի վեր: Այս տարի վեց դպրոցներու մէջ եղաւ մրցանքը: Հրաւիրը գրեթէ յանկարծակի եղաւ, այնպէս որ բոլոր դպրոցներ, մասնաւորապէս մերիներ, որովհետեւ պէտք եղածին պէս չկրցան պատրաստուիլ: Մեր ժառանգաւորը արդարէն շատ տուժած էին իրենց մարմնամարզի ուսուցիչներուն յաճախակի բացակայութեամբ, եւ հետեւաբար նախորդ տարիներու փայլուն յաջողութիւններէն զրկուեցան, թէեւ երկրորդ նիշը առին Վազգի մէջ: Կ'արժէ յիշել որ անցեալ տարի մեր ժառանգաւորը մատուցելու առին նոյնպէս Վազգի եւ Ռատուփ մէջ:

ՀԱՅՐ ՊՐԻՃԻՒՆԻՆ ԳԻԻՏԸ

Ժոնգրդ. Վարժարանի Անգլիկէնի ուսուցիչ Հայր Պրիմէն, մենդեան արձակուրդը անցնելու համար զայնքաւ էր էր-թապա, ճիշդ Գալիլիայ ծովուն հիւսիսային եզրերը, մօտիկ Կափառնատմի աւերակներուն եւ ասոր արեւմտեան կողմը:

Էր-թապա Գերման կրօնաւորներու կողմէ շինուած օթւան մը կայ, որուն ետքը կը բարձրանայ բլուր մը: Հայր Պրիմէն այդ բլուրին վրայ պսած առն կը գտնէ Երկայական կորովիկի (սեւ) բէկոր մը, մենեագրական բանի մը բառերով, Երեւոյ, դժուարբերելի, որուն մեծ կարեւորութիւն կ'ընծայեն հնագէտք: Այս բէկորին հնարիւրը կը վերանց, ըստ հնարասներու, 1468-ի եւ 1477-ի միջեւ, Ն. Բ.:

Հնախօսներ հետաքրքրուած են այս գիտնով, որ առաջին անգամ յայտարարուեցաւ երուսաղէմի Անգլիկան եպիսկոպոսարանին Lines of Communication բերին Մարտի թիւին մէջ, նոյն ինքն Հ. Պրիմէնի կողմէ, յետոյ The Times-ի մէջ (1928 Փետ. 11), եւ վերջապէս Bible Lands հանդէսին մէջ (1928 Ապրիլ) տեղեցաւ հնագիտական ճշգրտութիւն մը այս բէկորին եւ ասոր հմտներուն վրայ, որ կ'ըսուի թէ Պաղեստինի մէջ առկա զոս միջեւ հիմայ գտնուած են 12 հաւ ուրիշ եղիպական արձանի կորովներ, որոնք առկա վերջին ժամանակներու կը պատկանին 1350-1100 Ն. Բ., իսկ ասիկա 1501-1447 Ն. Բ.:

Rendel Harris Լոնտօնէ ուղղակի համակ մը գրելով Հայր Պրիմէնին ճշգրտութիւն ուղած է բէկորին վրայ, որ կը պահուի երուսաղէմի Հնախօսական Թանգարանին մէջ:

Այժմ Պլյանի մէջ պեղում կատարող երկու Ամերիկացի մասնագէտք Dr. Albright եւ Mr. Alan Row, կարգացած են այդ բանի մը բառեր այսպէս.

—Արալական հրովարտակը կարգացուեցաւ իրեն . . .
—Միտանցիի օգտակարները վաճեցի (այնպէս մը) որ մէկ հաւ անգամ չմնաց . . .
—Ահա ինչ որ բքի . . .

Գիտնու ձեւէն եւ Mitanni բառէն կը հետեւցնեն թէ այս բառը կը պատկանի եղիպոսի ժողով Հարաւորեան Տարմախ Գ.ի, որ իր ոյր ցոյց տուաւ Միտանցի կամ Նամարայի (Հիւսիսային Միջագետքի) մէջ: